ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2014թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ գլխին և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Նալբանդյան փողոցի հ.49/5 հասցեում գտնվող գույքը (133.5քմ մակերեսով հողամաս և 99.6քմ մակերեսով շինություն) փոխանակել Ֆեդյա Մամբրեի Թևանյանի սեփականությունը հանդիսացող Նալբանդյան փողոցի հ.49/3 հասցեում գտնվող գույքի հետ (124.0քմ մակերեսով հողամաս և 111.39քմ մակերեսով շինություն)։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<< ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ֆեդյա Մամբրեի Թևանյանը դիմել է Երևանի քաղաքապետարան, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 24.02.2014թ. հ.24022014-01-0224 վկայական) Նալբանդյան փողոցի հ.49/3 հասցեում գտնվող գույքը (124.0քմ մակերեսով հողամաս և 111.39քմ մակերեսով շինություն), կից Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 15.03.2013թ. հ.15052013-01-2205 վկայական) Նալբանդյան փողոցի հ.49/5 հասցեում գտնվող գույքի հետ (133.5քմ մակերեսով հողամաս և 99.6քմ մակերեսով շինություն) փոխանակելու առաջարկով:

Համայնքային սեփականություն հանդիսացող վերոգրյալ շինությունում տեղակայված է <<Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն>> ՊՈԱԿ-ի ջեռուցումը ապահովվող կաթսայատան սարքավորումները:

Քաղաքացի Ֆեդյա Մամբրեի Թևանյանը իր առաջարկում նշել է, որ փոխանակման համար առաջարկվող շինությունը իր դիրքով ավելի մոտ է <<Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն>> ՊՈԱԿ-ին և հայտնել է իր պատրաստակամությունը իր միջոցների հաշվին տեղափոխելու կաթսայատան սարքավորումները Երևան համայնքին փոխանցվող գույքի մեջ՝ ապահովելով վերագործարկումը և շահագործման հանձնումը, ինչպես նաև համայնքին փոխանցվող կաթսայատան վերանորոգումը:

Քաղաքացի Ֆեդյա Մամբրեի Թևանյանը պարտավորվել է նաև փոխանակման արդյունքում հրաժարվելու փոխանակվող գույքերի գնահատված շուկայական արժեքի տարբերությունից, ինչպես նաև իր միջոցների հաշվին կատարելու հարակից հատվածների բարեկարգման աշխատանքները:

Բարձրացված հարցը ուսումնասիրվել է և կատարվել է անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման աշխատանքներ, որից հետևում է, որ Նալբանդյան փողոցի հ.49/3 հասցեում քաղաքացի Ֆեդյա Մամբրեի Թևանյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի շուկայական արժեքը կազմում է 26 200 000 ՀՀ դրամ, իսկ հարևանությամբ Նալբանդյան փողոցի հ.49/5 հասցեում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի շուկայական արժեքը կազմում է 25 200 000 ՀՀ դրամ: Փաստորեն, քաղաքացի Ֆեդյա Մամբրեի

Թևանյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի շուկայական արժեքը 1000000 ՀՀ դրամով ավել է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող քննարկվող գույքի արժեքից:

Երևանի քաղաքապետարանի կողմից 2013 թվականի ընթացքում քննարկվող գույքը ներկայացված է եղել աճուրդի, սակայն գույքը ձեռք բերելու նպատակով համապատասխան հայտեր չլինելու պատճառով այն չի օտարվել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գույքային միավորների փոխանակման արդյունքում Երևան համայնքին է անցնում ավելի մեծ շուկայական արժեք ունեցող գույք, որը քաղաքացի Ֆեդյա Մամբրեի Թևանյանը պարտավորվում է իր միջոցների հաշվին վերանորոգել և կատարել հարակից հատվածների բարեկարգման աշխատանքներ, ինչը տվյալ տարածքում կստեղծի քաղաքաշինական առումով ավելի կանոնակարգված և բարեկարգված հատված, ապա նպատակահարմար է գտնվել նախապատրաստելու Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ